ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Շրջակա միջավայրի ազդեցությունը երեխայի ստեղծագործական երևակայության զարգացման գործընթացում**

Վերապատրաստվող՝ Արմինե Դանիելյան Վաչագանի

Երևանի հ. 77 ՆՈՒՀ ՀՈԱԿ

Վերապատրաստող՝ մ. գ. թ., Մարիաննա Ավագյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՆԵՐԸ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ 4

1.1 Ծանոթացում Շրջակա Միջավայրին և Էկոլոգիա 4

1.2 «Ինձ շրջապատող աշխարհը» 9

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. Ինչպես պետք է սովորեցնել երեխաներին հոգ տանել շրջակա միջավայրի մասին 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մարդուն շրջապատող միջավայրի հիմնախնդիրների մասին ՄԱԿ-ի ստոկհոլմյան կոնֆերանսի հռչակագրի» առաջին կետով հռչակվում է, որ «Մարդը իր շրջակա միջավայրի միաժամանակյա ստեղծողն ու կառուցողն է: Այդ միջավայրն է, որն ապահովում է նրա ֆիզիկական գոյությունը և հնարավորություններ ստեղծում նրա մտավոր, բարոյական, սոցիալական և հոգևոր զարգացման համար:

Ժամանակակից մանկավարժությունը մեծ տեղ է տալիս կրթական միջավայրի դաստիարակչական դերին ու հումանանցման հիմնախնդրին՝ քանի որ դրանով է պայմանավորված սովորողի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը, որից էլ բխում են ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքն ու դրդապատճառները, նրա սոցիալականացումն ու իրեն մանկական համակեցության լիիրավ անդամ համարելու զգացումը:

Գլուխ 1 ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

1.1 Ծանոթացում Շրջակա Միջավայրին Եվ էկոլոգիա

Մանկապարտեզում երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանք է տարվում ինչպես պարապմունքների ընթացքում, այնպես էլ ազատ գործունեության ժամանակ:

Ընդհանուր պարամունքները տարվա ընթացքում 36-ն են, որից 18-ը տրվում է «Առարկայական միջավայր» և «Հասարակական կյանքի երևույթներ», իսկ 18-ը՝ «Ծանոթացում բնությանը և էկոլոգիական դաստիարակություն» բաժիններին:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ:

Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան)

Առարկայական միջավայր

• Շարունակել ծանոթացնել երեխային շրջապատող առարկաներին և դրանց նշանակությանը: Սովորեցնել որոշել առարկայի գույնը, մեծությունը, ձևը, կշիռը (թեթև, ծանր), դրանց դասավորությունը՝ երեխայի համեմատությամբ (մոտ, հեռու, բարձր):

• Ծանոթացնել նյութերին (փայտե, թղթե, կտորից, կավից), դրանց հատկություններին (դիմացկուն, ամուր, փափուկ):

• Սովորեցնել առարկաները հետազոտելու ձևերը՝ ներառելով պարզագույն փորձը (սուզվում է, չի սուզվում, պատռվում է, չի պատռվում):

• Սովորեցնել խմբավորել (թեյի, ճաշի, խոհանոցային ամանեղեն) և դասակարգել լավ ծանոթ առարկաները (ամանեղեն, հագուստ):

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

• Զրուցել երեխայի հետ նրա ընտանիքի անդամների մասին:

Մանկապարտեզ

• Հիշեցնել մանկապարտեզի աշխատողների (դաստիարակ, երաժշտության դաստիարակ, բուժքույր, վարիչ) անունները:

• Սովորեցնել բարևել և հրաժեշտ տալ դաստիարակին ու ընկերներին:

• Խմբում խթանել կարգուկանոն պահպանելու ցանկությունը, հոգատար վերաբերմունք ձևավորել խաղալիքների, գրքերի, անձնական իրերի հանդեպ:

• Ծանոթացնել երթևեկության կանոններին:

• Սովորեցնել տարբերել փողոցի երթևեկելի մասը, մայթը, հասկանալ լուսակրի կանաչ և կարմիր լույսերի նշանակությունը:

Հայրենի երկիր

• Սովորեցնել հարազատ բնակավայրի (քաղաք, գյուղ, ավան) անվանումը, երեխային պատմել, թե որտեղ են զբոսնում հանգստյան օրերին (զբոսայգի, տեսարժան վայր, մանկական այգի և այլն):

Մեծերի աշխատանքը

• Շարունակել ծանոթացնել մտերիմ մեծերի աշխատանքին: Ծանոթացնել մանկապարտեզի աշխատակիցների գործունեությանը (բուժքույր, պահակ, դաստիարակ, խոհարար):

Միջին խումբ (4-5 տարեկան)

Առարկայական միջավայր

• Ծանոթացնել շրջապատող առարկաներին ու երևույթներին՝ գործունեության տարբեր ձևերի ժամանակ. խաղ, աշխատանք, ուսուցում:

• Երեխաներին սովորեցնել ճիշտ անվանել շրջապատի առարկաները:

• Երեխաներին պատմել շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, գրքերի նկարազարդումների նկատմամբ:

• Շարունակել ծանոթացնել առարկաների առանձնահատկություններին և որակին, կարողանալ տարբերակել դրանք:

• Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին ունեցած երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք:

• Ծանոթացնել ճանապարհային երթևեկության մի քանի կանոնների՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում (վերգետնյա, ստորգետնյա անցումներով), կարելի է անցնել միայն կանաչ լույսի ժամանակ:

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

• Ձևավորել պատկերացում, թե ինչ է ընտանիքը (նրանք, ովքեր ապրում են միասին, երեխաների հետ): Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան տանը (հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքադրելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին …):

• Սովորեցնել երեխաներին ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին:

Մանկապարտեզ

• Շարունակել ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին:

• Կատարելագործել մանկապարտեզի տարածքում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

Հայրենի երկիր

• Շարունակել դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի (փողոց, տուն, մանկապարտեզ) նկատմամբ:

• Տեղեկություններ տալ հայրենի քաղաքի (գյուղի, ավանի), մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:

• Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

Մեծերի աշխատանքը

• Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ, խոհարար, վաճառող, դերձակ…: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

• Տեղեկացնել ծնողների աշխատանքի մասին. նրանք պետք է իմանան՝ որտեղ են աշխատում իրենց հայրերն ու մայրերը:

Ավագ խումբ (5-6 տարեկան)

Առարկայական միջավայր

• Շարունակել սովորեցնել ճիշտ անվանել շրջապատի առարկաները:

• Երեխաներին պատմել շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, գրքերի նկարազարդումների նկատմամբ:

• Շարունակել ծանոթացնել առարկաների առանձնահատկություններին և որակին, որ երեխաները կարողանան տարբերակել դրանք:

• Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք:

• Տալ պատկերացում տրանսպորտում ճիշտ պահվածքի մասին:

• Ամրապնդել ճանապարհային երթևեկության կանոնների մասին երեխաների գիտելիքները՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում (վերգետնյա, ստորգետնյա անցումներով), կարելի է անցնել միայն կանաչ լույսի ժամանակ:

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

• Ամրապնդել պատկերացում այն մասին, թե ինչէ ընտանիքը (նրանք, ովքեր ապրում են միասին, երեխաների հետ): Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան տանը (հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքադրելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին …):

• Սովորեցնել, որ երեխան կարողանա ներկայացնել, թե որտեղ են աշխատում հայրիկը, մայրիկը, պատմել ծնողների զբաղվածության, նրանց մասնագիտությունների մասին:

• Սովորեցնել, որ երեխան կարողանա շրջապատին տեղեկություններ հաղորդել ամենամոտ հարազատների մասին:

Մանկապարտեզ

• Շարունակել երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին:

• Կատարելագործել մանկապարտեզի տարածքում, բակում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

• Սովորեցնել, որ երեխան կարողանա ճիշտ ասել մանկապարտեզի հասցեն:

• Հայրենի երկիր

• Շարունակել դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի (փողոց, տուն, մանկապարտեզ) նկատմամբ:

• Ամրապնդել տեղեկությունները հայրենի քաղաքի (գյուղի, ավանի), մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:

• Բացատրել «քաղաքացի» (գյուղացի) բառերի իմաստը:

• Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

Մեծերի աշխատանքը

• Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ, խոհարար, վաճառող, դերձակ…: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

• Տեղեկացնել ծնողների աշխատանքին. նրանք պետք է իմանան՝ որտեղ են աշխատում իրենց հայրերն ու մայրերը:

• Ձևավորել հետաքրքրություն, սեր և հարգանք տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

1.2 «Ինձ շրջապատող աշխարհը»

Նախադպրոցական կրթական հիմնական ծրագրի «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչի հիմնական նպատակներն են՝

- նպաստել իմացական կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը,
- զարգացնել հաղորդակցական հմտությունները:
- ձևավորել պատկերացումներ սեփական անձի, շրջակա միջավայրի կենդանական և անկենդան աշխարհի, բնության երևույթների մասին,
- ձևավորել շրջակա միջավայրի, բնության և կենդանական աշխարհի նկատմամբ հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք և համապատասխան վարքագիծ:

Ծրագրային այս բաղադրիչը հնարավորություն է տալիս լուծելու մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության մի շարք խնդիրներ:

«Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչի խնդիրներն են՝

- ընդլայնել իմացական հետաքրքրությունները շրջապատող աշխարհի մասին,
- ընդլայնել պատկերացումներն իր անձի, ընտանիքի, մանկապարտեզի, փողոցի, հայրենիքի, քաղաքի, գյուղի մասին,
- ընդլայնել պատկերացումներն ազգային տոների, ծեսերի մասին,
- ընդլայնել պատկերացումները երթևեկության պարզ նշանների, կանոնների, տրանսպորտի տեսակների մասին,
- շարունակել ձևավորել անվտանգ վարքագիծ,
- մանկավարժական ներգործությամբ սաների մեջ ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական և կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների, անկենդան բնության վերաբերյալ, տալ պատկերացումներ դրանց փոխկապակցվածության մասին,
- մշակել շրջապատի նկատմամբ, հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել

- բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ: Ծանոթացնել վարքի կանոններին,
- հաղորդել տարրական գիտելիքներ տարվա եղանակների , դրանց հերթագայությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում կատարվող փոփոխությունների մասին,
- տարրական պատկերացումներ տալ ջրի, հողի, անձրևի, ձյան, քամու հատկությունների մասին,
- սովորեցնել արտահայտել գործունեությունից տպավորությունները,
- ձևավորել բնության տարրերի պատճառահետևանքային տարրական կապերը հասկանալու կարողություն,
- շարունակել ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն,
- խորացնել սաների պատկերացումները մասնագիտությունների մասին:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀՈԳ ՏԱՆԵԼ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

Շրջակա միջավայրի մասին հոգ տանելը շատ կարևոր ունակություն է մեր օրերում, ինչը և պետք է երեխաներին սովորեցնել դեռ վաղ տարիքից:

Սկսեք քչից. Սովորեցրեք ձեր երեխային թափոնների կրճատման մասին:

Փորձեք բանջարեղեն աճեցնել ձեր երեխայի հետ կամ մտածեք այլ գործողությունների մասին, որոնք սովորեցնում են նրան, թե ինչպես հոգ տանել շրջակա միջավայրի մասին:

Ձեր երեխային օգնելու համար ավելի լավ հասկանալ շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունը, սովորեցրեք նրանց զվարճալի գործողությունների միջոցով, որոնք զարգացնում են օգտակար հմտություններ:

Եկեք քննարկենք դրանցից մի քանիսը:

1. Կատարեք թափոնների տեսակավորումը խաղի միջոցով

Եթե արդեն զբաղվում եք թափոնների տեսակավորմամբ, այս գործողությունը վերածեք խաղի՝ ձեր երեխային ուսուցանելու համար այս հմտությունը:

Թափոնների տարբեր տեսակների համար օգտագործեք տարբեր գունավոր պայուսակներ կամ տարբեր աղբարկղեր (թուղթ, պլաստիկ, ապակի և այլն):

Երեխայի հետ միասին կարող եք որոնել ինտերնետում և տպել նշաններ՝ տարբեր տեսակի աղբ ցույց տալու համար, այնուհետև դրանք կպցնել աղբարկղերի վրա:

Դրանից հետո պատմեք ձեր երեխային թափոնների տեսակավորման մասին:

2.Թափոնները օգտագործեք որևէ ստեղծագործական աշխատանք կատարելիս

Մի շտապեք դեն նետել հին ամսագրերը, պլաստիկ տարաները, տուփերը և այլն:

Երեխան կարող է դրանք օգտագործել ստեղծագործական գործունեության համար:

Տվեք նրան սկոտչ ժապավեն, սոսինձ, ներկեր, մարկերներ, մկրատ, և թույլ տվեք, որ նոր բան ստեղծի այն բանից, ինչ դուք պատրաստվում եք նետել աղբարկղը:

3. Գունավորեք ձեր էկո-պայուսակները

Ո՞վ ասաց, որ էկո-պայուսակները պետք է լինեն մոխրագույն և ձանձրալի:

Վերցրեք գործվածքների ցուցիչներ, ներկեր և այլն և զարդարեք ձեր պայուսակը:

Վերցրեք այն ձեզ հետ ամեն անգամ գնումներ կատարելիս:

4. Խրախուսեք ձեր ընտանիքին մեքենա վարելու փոխարեն ավելի շատ քայլել

Քայլելը լավ է շրջակա միջավայրի համար, ի տարբերություն մեքենայով ճանապարհորդելու:

Նաև քայլելը լավ ֆիզիկական գործունեություն է:

Եթե ժամանակը և այլ հանգամանքները թույլ են տալիս,ոտքով գնացեք խանութ, դեղատուն և այլն:

Եթե ձեր երեխայի հետ քայլում եք, քայլելիս խաղացեք նրա հետ:

Օգնեք ձեր երեխային հասկանալ շրջակա միջավայրը պահպանելու անհրաժեշտությունը փոքր տարիքից:

Այս գործում ձեր ներդրումը կարող է առաջին հայացքից փոքր լինել, բայց երկարաժամկետ հեռանկարում կարող են մեծ օգուտ բերել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանրապես շրջապատող աշխարհին երեխայի ծանոթությունն ու ուսումնասիրությունները բերում են մի քանի վերջնարդյունքների՝

- ունենա սեռադերային պատկերացումներ իր մասին,
- իմանա ընտանիքի անդամների անուններն ու ազգանունները,
- ունենա պատկերացումներ հայրենի երկրի, մայրաքաղաքի, իր բնակավայրի (քաղաք, գյուղ, տուն) մասին,
- իմանա իր հասցեն,
- կողմնորոշվի իրեն ծանոթ միջավայրում,
- խոսի իր նվաճումների մասին,
- ճանաչի ընտանիքը, տարբերակի ընտանեկան կապերը (ընտանիքի անդամներ),
- ճանաչի իր երկրի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը,
- ունենա գիտելիքներ որոշ ազգային տոների մասին,
- ճանաչի ազգային հագուստի (տարազ) որոշ տարրեր,
- ճանաչի որոշ մասնագիտություններ և աշխատանքային գործիքներ,
- ճանաչի և անվանի մրգերը /խնձոր, տանձ ծիրան, դեղձ, բանան, սալոր/,
- ճանաչի, անվանի բանջարեղենը /լոլիկ, վարունգ, պղպեղ, գազար/ ,
- տարբերակի միրգն ու բանջարեղենը ՝ ըստ արտաքին տեսքի և համի,
- ճանաչի և անվանի ծաղիկները ըստ արտաքին տեսքի և գույնի/ վարդ, կակաչ, մանուշակ և այլն/,
- ճանաչի ծառերի տեսակները (պտղատու և դեկորատիվ,) և կառուցվածքը (բուն, ճյուղ , տերև, պտուղ),
- ճանաչի թռչուններին, տարբերի ՝ ըստ իրենց արտաքին տեսքի /աղավնի, հավ, թութակ/
- ծանոթանա ընտանի կենդանիներին և նրանց ձագերին: ներկայացնի նրանց օգտակարությունն ու նշանակությունը,

- ճանաչի տարվա եղանակները,տարբերակի նրանցում տեղի ունեցող սեզնային փոփոխությունները/ գարուն, ամառ, աշուն, ձմեռ/
- անվանի և ճանաչի բնության տարրերը՝ ջուր, օդ, արև և այլն,
- ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը,
- նկատի, բնության գեղեցկությունը,
- դրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ,
- կարևորի մարդու աշխատանքը բնության մեջ,
- դրսևորի ճիշտ վարքագիծ բնության գրկում,
- անվանի հիմնական հույզերը,
- բացատրի սեփական հույզերի պատճառները,
- ապրումակցի ուրիշների հույզերին,
- մասնակցի հողամասում 20-25 բոպե տևողությամբ աշխատանքներին,
- հորինի և խաղա դերային խաղեր,
- խաղի մեջ կատարի դերաբաշխումներ,
- հետևի վարքի կանոնների,
- համագործակցի հասակակիցների հետ,
- ինքնուրույն հանվի և հագնվի,
- տարբերակի առողջ և անառողջ սնունդը:
- հետևի առողջության և անվտանգության պահպանման կանոններին,
- դրսևորի սոցիալական հմտություններ,
- հասկանա սեփական արարքների հետևանքները,
- հասկանա սեփական իրավունքներն ու պարտականությունները,
- օգնի հասակակցին,
- հետևի վարքի կանոններին,
- մասնակցի խաղերին և խաղային իրավիճակներին:

Գրականության ցանկ

1 Կրթական միջավայրի հումանացման գործընթացի մանկավարժական պայմանները Թոփուզյան Ա. Օ.
2 https://erexa.am/blog/sovorecnum-enq-erexanerin-hog-tanel-shrjaka-mijavayri-masin/
3 Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր 2021թ.
4 https://escs.am/ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքէջ
5 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպում այլընտրանքային մոդելներով Դաստիրակի ուղեցույց 2018